# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 183 - Ա

«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՐԴԱՐՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ ՍՊԻՏԱԿՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 150,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Մանկապարտեզի հարդարում և կահավորում Սպիտակում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արթուր Ենոքյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00257698) 2023 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N 01/02/23 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է պեմզաբլոկի մատակարարում՝ 1,615,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գլոբալ Քընսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06951956) 2023 թվականի փետրվարի 8-ին կնքված՝ N 08/02/23 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 16,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Մաստեր Գլասս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01308109) 2023 փետրվարի 8-ին կնքված՝ N 08/02/23 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է դռների, պատուհանների և պարագաների մատակարարում՝ 7,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Մաստեր Սիթի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00492798) 2023 թվականի փետրվարի 8-ին կնքված՝ N 08022023-01 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական ապրանքների մատակարարում՝ 15,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ՎԷՆԻ Մարկետինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02679404) 2023 թվականի փետրվարի 8-ին կնքված՝ N 08/02/23 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է ցեմենտի մատակարարում՝ 3,754,195 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

09.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ